սկսած մինչև Մարսիլիա, Անգօրայից մինչև Կանդիա. էլ չը մնաց Մարկոս Աղաբէկեան, էլ չը մնաց Օրմանեան վարդապետ, էլ չը մնաց վարժապետ, գրագէտ և անգրագէտ մարդիկ, որոնք ներս չը մտնէին և իրանց մասը չը բերէին այս ընդարձակ վիճաբանական գործի մէջ. Կարծիք չը կայ, որ բոլոր թիւր և սխալ դատողութիւններ, բոլոր մոլոր և վերացական ճամարտակութիւններ պատահում էին «Մանղումէի» մէջ այնպիսի բուռը ընդդիմադրութեան և հարուածների, որ էլ անկարող էին լինում իրանց կըրկնութիւնը մէջ բերել. Վերջի ի վերջոյ հարցը հասունացած և բոլորի համար պարզված յանգեց այն ուրախալի արդիւնքին, որը արդէն ձեզ յայտնի է. Ներսէս պատրիարքը, որը այդ բոլոր ժամանակ սրահայեաց արձի նման դիտում էր իր մտքի բարձրութիւնից և ուշի ուշով հետևում կատաղի պայքարին, արձակեց իր պատգամը հանդիսաբար հնչելով հայոց տնտեսական միութեան անունը, որը երեք—չորս տարիէ ի վեր, Կ. Պոլսի «պատուական» և «ազգասէր» լրագիրների շնորհիւ, ընկղմել էր մոռացութեան գետի անդունդը. Այս ելքի հասաւ վերջապէս այն բորբոքալից բանակռիւը, որը եօթը ամսից աւելի զբաղեց այստեղի և մասամբ էլ այդ տեղի հայ լրագրութիւնը. այսպիսով մի կողմը մընացին «Մշակ», «Մանղումէ», «Արևելեան Մամուլ» և մի քանի էլ այստեղի փոքր լրագիրներ, իսկ միւս կողմ՝ բոլոր մնացածները. Բայց այսչափ բարոյական ծանր զոհաբերութեամբ տարած յաղթանակը դեռ միայն պրինցիպի յաղթութեան հարց է, հիմա մնում է ոչ պակաս դժուար գործ, որ է այդ ընդունված պըրինցիպի ձևակերպութեան հարցը, որը ի հարկէ քիչ ջանքերի չէ կարօտ.

Այս հարցի մէջ էլ, ինչպէս հարկաւոր էր ըսպասել, «Մասիսը» դարձեալ, այսպէս ասած, պահպանողական և կաչկանդող դեր ընդունեց, իսկ «Մանղումէն» յառաջադէմ, եւրոպական և արծարծիչ. Ահա երկու կողմերի ունեցած կարծիքը և հաւանած պլանը տնտեսական միութեան համար, որոնցից մինը հաւանած է և կուրօրէն ճանաչած «Մասիսը», ինչպէս մի քանի մասնաւոր անձանց կազմած պլան, իսկ միւսը համ կազմած է. համ առաջարկված գործադրութեան համար «Մանղումէի» խմբագիր պ. Փանոսեանը ինքը իր ինիցիատիվով.

«Մասիսի» հաւանած բանը մի նոր բան չէ, այն է, վեր առնել որ և է ֆրանսիական կանոնագրութիւն, թարգմանել նորա միջի բոլոր այն յօդուածները, որոնք վերաբերվում են միայն հարցի ձևապաշտական կողմին, ինչպէս օրինակ՝ անդամակցութեան, համարութեան, քուէարկութեան և այլն, իսկ բուն էութիւնը, այն է հիմնարկութեան նպատակի պարզելը թողնել մութ և անորոշ. Այդ էլ վերաբերվեց նա դէպի տընտեսական միութեան համար կազմված կանոնագրութիւնը, որը բաղկացած է, երևակայեցէք, մօտ 40 յօդուածներից, որոնք վերաբերվում են ձևապաշտական կէտին, իսկ ընկերութեան նպատակի համար միայն ասված է անորոշ խօսքերով մէկ տող «ընկերութեանս նպատակն է հայոց նիւթական զարգացման հետամտիլ.» Բայց թէ ինչպէս պիտի հասկացած և ինչի մէջ է կայանում այդ նիւթական զարգացման բացատրութիւնը, որ որոշ հարցով պիտի սկսած նորան և ինչով վերջացրած, այդ մասին Աստուած տայ... Այսպիսով ընկերութիւնը դեռ չը կազմած, սկիզբ է դնում այնպիսի մի վատ ուղղութեան, որը ունեցել են մինչև հիմայ ազգային ժողովը, միացեալ ընկերութիւնը և բոլոր ընկերութիւնները. Օրինակ մինչև հիմայ Միացեալ ընկերութիւնը իրան պարզած չէ եղել իր գոյութեան այնչափ աշխատութեանց և գործունէութեան բուն նպատակը, որովհետև ընկերութեան կանոնագրութեան ճակատին դրած է եղել մի անորոշ բառ «Լոյս սփռել.» Էլ հարցնող և խորհող չէ եղել թէ ինչ պիտի հասկացած այդ բառով. որը պիտի լինի ընկերութեան նպատակը. նախնական ուսում, բարձր ուսում, միջնակարգ ուսում, որ պրոգրամով, որ սիստեմով և այլն. Այդ է պատճառը որ այս ամբողջ երեք տարի ոչինչ չը յառաջացաւ, որովհետև միայն այսչափ լրագրական յարձակումներից և սկանդալներից յետ միայն խելքի եկան և ասեցին. «ճշմարիտ, որն է մեր նպատակը.» Ահա երբ այդ հարցը իրանց առաջարկեցին, այն ժամանակ միայն հարկաւոր համարեց «Լոյս» բառի տեղ դնել տարրական ուսում. դորանից յետ միայն սկսեցին գործը կրկին գլխից սկսել, փակելով Վանի վարժապետանոցը և այլն.

Ճիշդ նոյնն է ներկայանում և տնտեսական միութեան կանոնագրի մէջ, որը ուղարկում եմ ձեզ ներփակեալ, որ ինքներդ էլ համոզվէք. Զարմանալի են սոքա, որ գոնէ մի անգամ չը կարդացին թիֆլիսում պ. Նաւասարդեանի ջանքերով նոր հիմնված «Բարեգործական ընկերութեան» կանոնագրութիւնը, որի նպատակը բարեգործական է, բայց ամբողջ ութ յօդուածներով որոշած է թէ ինչում պիտի կայանայ այդ բարեգործութիւնը. Բայց գիտէք ինչից է առաջ գալիս կ. պոլսեցոց այսպիսի ճապաղութիւնը և տարտամութիւնը ամեն բանի մէջ, մանաւանդ գործնական կերպով Հայաստանին ծառայելու. նորանից, որ սոքա չը գիտեն թէ որն է Հայաստանի տնտեսական կարիքը. որն է գլխաւոր և անհրաժեշտ պէտքը. որն են առաջնական, երկրորդական, երրորդական և չորրորդական կէտերը և անելիքը. Այդ է պատճառը, որ դեռ ընկերութիւնը գոյութիւն չառած, լրագիրների մէջ բոլորովին միմեանցից տարբեր մեկնութիւններ են երևում նորա պրոգրամի մասին. մէկը ասում է թէ նպատակը պիտի լինի Հայաստանի ցրված բեռնակիրներին հայրենիք ուղարկելը. միւսը ասումէ թէ այդ տնտեսական միութեան նպատակը Հայաստանի անհող ժողովրդի համար հող ձեռք բերելն է. մի ուրիշը ասում է թէ վաչխառուներից աղքատ ժողովուրդը ազատելն է և այլն և այլն, մէկ խօսքով ամեն ինչ է նպատակը բացի մի պարզ և որոշ կերպով ձևակերպված պրոգրամի. Իսկ գիտէք թէ որը կարող է լինել սրա հետևանքը. ազգային ժողովի և մինչև հիմայ եղած Միացեալ ընկերութեան նման կը կազմվի «ընդհանուր ժողով», «գործադիր ժողով», «խորհրդատու մարմին», «հաշուառու մարմին» և այլն. կը սկսվեն անվերջ վիճաբանութիւններ, քուէարկութիւններ, ձայներ, մասնախումբեր և այլն առանց իմանալու սակայն թէ որն է իրանց գործունէութեան բուն միտքը և ձգտումը. Իսկ միւս կողմից էլ պակաս չեն լինի փափագեանի նման պտուղներ, որոնք անդամ, կամ, ինչպէս սոքա սիրումեն ասել, երեսփոխան ընտրվելով կը սկսեն պղտոր ջրի մէջ որսալ այնպիսի ձուկեր, որոնք կը մտնեն ոչ իրանց փորը, այլ ուղղակի գրպանը. Եւ դա կարող է լինել օրինակ հետևեալ կերպով. Ստեփան Փափագեանը և նորա նմանները (որոնց թվի մէջ փառք Աստուծոյ այսչափ մեծ առատութիւն է այստեղ) նկատելով որ չունէ տնտեսական միութիւն ասված նոր հիմնվող ընկերութիւնը ձևակերպած որոշ խօսքերով պրոգրամ, հէնց որ կազմվեց պրծաւ ընկերութիւնը, իսկոյն կը գան կը նստեն և նայելով իրանց առնելի կաշառներին կամ որոշ փայի կառաջարկեն օրինակ նախ քան մի բան անելը ուղարկել Հայաստան Կ. Պոլսից այսչափ հարիւր բեռնակիրներ, որոնց ցուցակը ի հարկէ կը լինի իր գրպանի մէջ յաջողութեան դէպքում նոցանից իր մասը ստանալու համար. Մէկ ուրիշն էլ կառաջարկէ նոյն ազգասիրական նպատակով մի ուրիշ բան. կը սկսվեն վիճաբանութիւններ ազգասիրական նպատակների համար և կը վերջանայ նորանով, որ կամ մի երկու մարդ կը շահվի կամ թէ ամբողջ տարիներ ոչինչ չառաջանալով, կը կորչի նուիրատու ժողովրդի եռանդը և մի գեղեցիկ օր կը քանդվի ընկերութիւնը. Այսպէս են երևացած և այսպէս են աներևոյթացած Կ. Պոլսի մէջ հիմնված հարիւրաւոր ընկերութիւններ. Բացի այդ վերոյիշեալ հաստատութեան դեռ չը վաւերացրած կանոնագրութեան պակասութիւնը նորա մէջն է կայանում, որ դարձեալ նորա աղբիւրը կազմում են յօժարական նուէրներ և ուղղորմութիւն, որոնք այսօր կան, վաղը ոչ. մանաւանդ որ արդէն հիմակվանից սկսել են ձայներ լսվիլ թէ հաստատութեան կանոնագրութեան չինող գլխաւորը «գործիչը» Կիւմիւշեան անունով մի այնպիսի ճարպիկ ոարաֆ է, որը եթէ ամբողջ մի ուղտ կուլ տայ (ի հարկէ միշտ պատուական Մասիսի խմբագրի ընկերակցութեամբ) դարձեալ նա կարող է ամեն բոպէ իրան չատ անօթի, նիհար և գործից խաբար չը լինող անմեղի մէկը ցոյց տալ. Ահա այս ընթացքի վրա է այն համակրելի և գովելի միութեան կանոնագրութեան գործը, որի սկզբունքը օրհնեց Ներսէսը և առաջարկեց ամբողջ ազգին գործադրութեան համար, բայց մեր յարգած պատրիարքը, ինչպէս գլխաւոր հրամանատար, միայն կարող է և պիտի անէ ընդհանուր ցուցմունքներ, այլ ոչ թէ մասնաւորութեանց մէջ մտնէ և կանոնագրութիւն մշակէ. այդ ամենը անհատների և պուբլիցիստների գործն է. իսկ թէ այստեղի «պուբլիցիստ» ասվածները ինչպէս են նայում իրանց անելիքի և կոչման վրա, ահա Մասիսի սեպտեմբեր 22-թի համարը, որի մէջ ամբողջ վեց սիւնակներ պոռոտախօսութիւններ անելով այդ միութեան վրա, ի վերջոյ ասում է. «այս յօդուածը գրելով, մենք բնաւ յաւակնութիւն չունենք նորակազմ ընկերութեան գործողութեանց մի ուղղութիւն ցոյց տալ.» Գուցէ չը հաւատան մարդիկ այսպիսի զարմանալի խօսքերի արտայայտութեան, վասն որոյ թող առնեն ու կարդան յիշեալ համարը...

Հիմայ գանք Մանղումէի խմբագիր պ. Կարապետ Փանոսեանի գծագրած պլանին, որի մասին այս գլխից կերաշխաւորեմ ձեզ, որ ձեր ընթերցողներից իւրաքանչիւրի ոչ միայն հաւանութիւնը, այլ հիացմունք պիտի գտնէ, բայց այս մասին հետևեալ անգամ.

Ուրախութեամբ կարդացի Մշակի մէջ, որ Աստրախանի հայոց օրիորդական դպրոցի մէջ ընդունված է տնարարութեան և կեանքի համար պիտանի արհեստները մտցնելը. ցանկալի է իմանալ՝ Թիֆլիսի Մարիամեան և Անանեան ուսումնարանները գոնէ Աստրախանից օրինակ չը պիտի առնեն. Իսկ Ախալցխան, իսկ միւս քաղաքները, որոնք միայն բարիշնեաներ են պատրաստում....

Այն օրից, երբ Միացեալ ընկերութեան այժմեան տնօրէն ժողովը որոշեց դնել ընկերութեան գործը աւելի երաշխաւորված դրութեան մէջ, տալով ընկերութեան նպատակայարմար և արդիւնաւոր ուղղութիւն, դնելով նորա գործունէութեան նպատակակէտ Հայաստանի մէջ միայն տարրական ուսում տարածել, այն էլ յետ ընկած գիւղերի մէջ, այդ օրից նախորդ տնօրէն ժողովը ընդ առաջնորդութեամբ պ. Զարեհ Շիշմանեանի էլ չը գիտէ թէ ինչպէս արդարացնի հասարակութեան առաջ իր վարած անպտուղ ամբողջ մի տարուայ «գործունէութիւնը». Բայց ամենից չատ հետաքրքիր են մի քանի ժամանակից ի վեր Մասիսի մէջ տպվող մերկացումները նախորդ տնօրէն ժողովի արած սոսկալի դրամական զեղծումների «ով է խեղաթիւրողը» վերնագրով. Այդ յօդուածների մէջ ի միջի այլոց թուանշաններով ապացուցանվում է, որ պ. պ. Զարեհ Շիշմանեանի և Պետրոս Վասիլեանի արած զեղծումներով կարելի կը լիներ պահել Հայաստանի գիւղերում ամբողջ 14 նախակրթարան. Եւ սորանից յետ յանդգնութիւն կունենան «զրպարտութիւն» համարել այն, ինչ տպվեց Մշակի մէջ արդէն մի ամիս առաջ.

Գրիգոր Նիկողոսեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«National Zeitung» լրագրին Ցօրնից գրում են. «Սոցիալական շարժումը աւելի և աւելի մեծանում է. Այդ ագիտացիայի հետ կապ ունի Վարշավայի հարուստ բանկիրի որդի. սոցիալիստ Մենդելսօնի յայտնվելը Պոզնանում, Ցօրնում, և Բրոմբերգում. Նա Պոզնանից Ցօրն եկաւ մի ջահիլ կրթված աղջկայ, վօլինեան կալուածատէրի կնոջ, Մարիա Յանկովսկայի ուղեկցութեամբ, որ փախել էր Նվէյցարիայից ուսանող Իէրոնիմ Տրուչկովսկիի հետ (որը կալանաւորված է Բավիչում.) Նկատելով, որ Պոզնանում և Ցօրնում պոլիցիան հետևում է նրանց. այդ անձինքը հեռացան այդ տեղերից, բայց Բրոմբերգում մատնվելով՝ կալանաւորվեցան. Շուտով Մենդելսօնի և Յանկովսկիի կալանաւորելուց յետոյ, պոլիցիան, Ցօրնում մէկ հարուստ վաճառականի մօտ գտաւ մէկ արկղ, որի վրա գրված էր հետևեալ հասցէ. «Ցօրնում, արտիլերիական դէպօ. Զինուորական առարկաներ.» Արկղում գտնվեցան յեղափոխական բովանդակութիւն ունեցող ռուսերէն և լեհերէն գրքեր. Վաճառականը բացատրեց, որ հիւրանոցի ծառան, որտեղ Մենդելսօն բնակվում էր, դրեց իր մօտ այդ արկղը, յետոյ ուր հարկն է այնտեղ ուղարկելու համար. Այդ առիթով քննութիւն է սկսված. Մինչև այժմ լեհական ազգաբնակութիւնը բաւական սառն է վերաբերվում դէպի սոցիալական ագիտացիան.

—«Polit Coressp.» լրագրին Փարիզից գրում են, որ այնտեղ չատ են խօսում Գամբէտտայի և Բիսմարկի իբր թէ լինելի տեսակցութեան մասին. Բայց, միւս կողմից կասկածում են, որ նրանք կարող լինեն ժամանակ ունենալ տեսակցութեան համար, որովհետև հոկտեմբերի 27-ին ընտրութիւններ կը սկսվեն ռէյխստագում, իսկ 28-ին կը բացվեն ֆրանսիական պատգամաւորների ժողովները. Մինչև հոկտեմբերի 27-ը իշխան Բիսմարկ սաստիկ պարապված կը լինի ներքին քաղաքականութեամբ, ժամանակ չի ունենայ ուրիշ բաների վրա մտածելու, իսկ 28-ից յետոյ Գամբէտտան հազիւ թէ ազատ ժամանակ ունենայ ենթադրելի տեսակցութեան համար.

—Փարիզի մէկ լրագրի խօսքերով Աֆրիկայի և Միջերկրական ծովի վերաբերութեամբ յարուցված խնդիրները շուտով կը քննվեն Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Սպանիայի և Թուրքիայի ներկայացուցիչներից կազմված կոնցրէսում.

—Փարիզի լրագիրները հաղորդում են, որ չափաւոր կուսակցութիւնը ամեն միջոցներ գործ է դնում Գամբէտտայի ապագայ մինիստրութեան մէջ մտցնել և Ժիւլ Ֆէրրին. ինքն Ֆէրրին յոյս ունի ժողովրդական լուսաւորութեան մինիստր դառնալ, որովհետև, չափաւոր ազատամիտների կարծիքով, յայտնի անաստուած Պոլ Բէրի նշանակելը այդ պաշտօնի վրա բաւական համարձակ և վտանգաւոր քայլ կարող էր համարվել ներկայ ժամանակում. Գամբէտտան դեռ ևս ոչինչ չէ յայտնել մինիստրական կրիզիսի առիթով. մինչև այժմ դեռ նրա անունով խօսում են նրա քաղաքական և լրագրական բարեկամները. Զինուորական մինիստրը Սան-Կանտէնում մէկ ճառ կարդաց, որի մէջ գովաբանում էր Գամբէտտայի կառավարչական ընդունակութիւնը գերմանական արշաւանքի դժուար տարիներում. Այնու ամենայնիւ գեներալ Ֆարր ոչ մի դէպքում մինիստր չի մնայ. նրա պաշտօնը երևի Ֆրէյսինէ կը ստանայ.

—Անգլիական լրագիրները հաղորդում են, որ Պարնէլ Ուէկսֆօրդում մէկ ճառ կարդաց որպէս պատասխան Իրլանդիայի դէմ Գլադստոնի ասած ճառին. Պարնէլի խօսքերով, անգլիական մեծ մինիստրը համարձակ երեսպաշտ է, թափառական կեղծ ասպետ է, որը բոլոր ազգերի ազատութեան պաշտպան է հանդիսանում, բացի իրլանդացիներից. Գլադստոնի ասածները, Պարնելի խօսքերով, կարժանանան բոլոր իրլանդացիների արհամարհանքին, որոնք հաստատ վճռել են ամեն միջոցներով աշխատել ձեռք բերել իրանց պապերի հողը և հայրենի երկրի օրէնսդրական անկախութիւնը.

—«Voltaire» լրագրում Գամբէտտայի ամենամօտ բարեկամներից մէկը՝ Բանկ, հաստատում է, որ մեծամասնութեան առաջնորդի թշնամիները ցանկանում են այժմեան կաբինէտի քաղաքականութեան պատասխանատուութիւնը գցել Գամբէտտայի վրա, որին ամեն կերպ աշխատում են վնասել և անունը կոտրել հասարակական կարծիքի առաջ. Բանկ այդ թշնամութիւնը վերաբերում է Գրէվիին, որը իբր թէ անբաւական է Գամբէտտայի չափից դուրս մեծ ժողովրդականութիւն ունենալուց. Մի քանի լրագիրները լուր տարածեցին, որ իշխան Բիսմարկ ֆրանսիական դեսպանին Բերլինում յայտնեց իր անբաւականութիւնը իշխանութիւնը Գամբէտտայի ձեռքը անցնելու պատճառով. Գերմանական դեսպանութիւնը փարիզում բոլորովին հերքում է այդ լուրը և ընդհակառակը հաղորդում է, որ իշխան Բիսմարկ յայտնեց իր բաւականութիւնը այդ առիթով.

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 հոկտեմբերի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ր. երկրորդ 92 ր. 50 կ., երրորդ 93 ր. 75 կ., չորրորդ 92 ր. 75 կ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմսակը արժէ 224 ր., երկրորդ 218 ր., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ր. 75 կ., երկրորդ 90 ր. 75 կ., երրորդ 90 ր. 75 կ., ոսկի 7 ր. 64 կ.։ Ռուսաց 1 ր. Լօնդօնի վրա արժէ 26,3 պէնս, Ամստերդամի վրա 131,25 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 222 մարկ։ Փարիզի վրա արժէ 274 ֆրանկ 25 սանտիմ։ Բօրսայի տրամադրութիւնը հանգիստ է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ